

ՍՏԵՓԱՆ ՊԱՊԻԿՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԱՐՑԱԽԻ
ԶՐԱՂԱՑՆԵՐԸ**

137 ✓
621.926(091)

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
Մ. ՔՈԹԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՍՏԵՓԱՆ ՊԱՊԻԿՅԱՆ

1109223

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԱՐՑԱԽԻ ԶՐԱՂԱՅՆԵՐԸ

ԵՐԵՎԱՆ
ՀՀ ԳԱԱ ՏԻ
2022



ՀՏԴ 620.6(091):621.926

ԳՄԴ 31դ

Պ 232

Տպագրվել է ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գիտխորհրդի որոշմամբ և Հայկական էներգետիկական ակադեմիայի գիտխորհրդի երաշխավորությամբ

Խմբագիր

տնտեսագիտության դոկտոր,
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի տնօրեն
ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Գրախոս

տնտեսագիտության դոկտոր., պրոֆեսոր
ԱՇՈՏ ՄԱՐԿՈՍՅԱՆ

ՊԱՊԻԿՅԱՆ Մ. Ռ.

Պ 232

Հայաստանի և Արցախի ջրաղացները:
Մենագրություն / Մ. Ռ. Պապիկյան; ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի
անվան տնտեսագիտության ինստիտուտ և Հայկական էներգետիկական ակադեմիա. - Եր.: ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ, 2022. - 48 էջ + 12 էջ ներդիր:

Գրքում ներկայացվում է Հայաստանի և Արցախի ջրաղացների պատմությունը սկզբնավորումից մինչև մեր օրերը: Բերված են հարուստ տեղեկատվական տվյալներ և վերլուծություններ կապված Հայաստանի և Արցախի ջրաղացների զարգացման հետ:

Գրքում տեղ է գտել նաև աշխարհի ջրաղացների վերաբերյալ տեղեկատվություն:

Գիրքը նախատեսվում է ոչ միայն գիտնականների, ուսանողների, այլ նաև տվյալ բնագավառի մասնագետների համար:

ՀՏԴ 620.6(091):621.926

ԳՄԴ 31դ

ISBN 978-9939-9279-8-5

© ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. տնտեսագիտության ինստիտուտ, 2022

ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ	4
Գլուխ 1. ՋՐԱԴԱՑՆԵՐԻ ՀԱՅՏՆԱԳՈՐԾՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ	7
1.1. Ջրաղացները հին Հռոմում և Հունաստանում	7
1.2. Ջրաղացների սկզբնավորումը Հայաստանում.....	9
1.3. Աշտարակի ջրաղացը.....	11
1. 4. Տաշտունի ջրաղացը	13
1. 5. Երևանի ջրաղացները.....	13
1.6. Ներքին Գետաշենի ջրաղացը	16
1.7. Արցախի ջրաղացները	17
Գլուխ 2. ՋՐԱԴԱՑՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԸ	21
2.1. Ջրաղացները միջնադարյան Հայաստանում	27
2.2. Արտասահմանյան երկրների ջրաղացների պատմությունից	33
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ	36
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	37
ВОДЯНЫЕ МЕЛЬНИЦЫ АРМЕНИИ КАК МАЛЫЕ ИСТОЧНИКИ ЭНЕРГИИ. СЕГОДНЯ И ЗАВТРА	40
ВЫВОДЫ	45
ՆԵՐԴԻՐ	47

ԱՌԱՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

Էներգետիկան տնտեսության այն ոլորտն է, որը զբաղվում է էներգիայի ստացման, տեղափոխման և բաշխման հարցերով: Դարեր շարունակ մարդկությունը էներգիա փնտրելու ակնկալիքով ստեղծել է բազմաթիվ սարքեր և սարքավորումներ, որոնք հնարավորություն են տվել նրան ապրելու: Սկսելով ջրաղացներից մարդը փորձել է այն կատարելագործել մինչև միջուկային էներգիայի օգտագործում: Ջրի ուժով աշխատող ջրաղացները, քամու էներգիայով աշխատող հողմաղացները մեծ դեր կատարեցին բնագավառը զարգացնելու, նորանոր հաջողությունների հասնելու համար: Հայաստանը գտնվելով աշխարհաքաղաքական դժվարին դրության մեջ միշտ էլ փորձել է էլք գտնել ստեղծված դժվարին իրավիճակներից: Ջրաղացներ Հայաստանում եղել են շատ հին դարերում և ծառայել են բնակչությանը:

«Հայաստանի և Արցախի ջրաղացները» աշխատությունը հեղինակի երկար տարիների աշխատանքի արդյունք է: Հեղինակը օգտագործելով բազմաթիվ աղբյուրներ գրել է ջրաղացների պատմությունը սկզբնավորումից մինչև մեր օրերը: Հավաքվել է հսկայական փաստաթղթեր, այլ նյութեր, որոնք պատմական, ճանաչողական և իմացաբանական տեսակետից մեծ արժեք են ներկայացնում: Մ.Պապիկյանը դեռևս չի մշակել անձնական արխիվում գտնվող բազմաթիվ վավերագրեր: Այն անտարակույս կօգտագործվի հետագա աշխատանքի համար: Անշուշտ, ծանր և շատ պատասխանատու գործ է կատարվել:

Հարկ է նշել, որ հեղինակի կողմից այս բնագավառում Հայաստանի և արտասահմանյան պարբերականներում տպագրվել և շարունակվում են տպագրվել տասնյակ հոդվածներ: Նրանք մեզ տանում հեռուներ, թե ինչպես են մեր նախնիները այսօր ստացել ջրաղացի աշխատանքի հետևանքով մինչև մեր ժամանակները: Աշխատանքում տրվում է նաև ջրաղացների զարգացման հեռանկարները Հայաստանում և Արցախում: Աշխատանքը գրված է մասնագիտական բարեխղճությամբ և անաչառ հետազոտողի պատասխանատվության մեծ զգացումով:

Աշխատանքի ուշագրավ առավելություններից է նաև այն, որ ներկայացված է ջրաղացների համաշխարհային զարգացման միտումները:

Հեղինակի կատարած տնտեսագիտական հաշվարկները վկայում են, որ միջին հաշվով մեկ ջրաղացը օրական կարող է աղալ մինչև 500 կիլոգրամ հացահատիկ և այն համեմատել է այն ներկայում գործող էլեկտրական աղացների հետ ներկայացնելով ջրաղացների առավելությունները մյուս աղացների նկատմամբ: Արդյունքում ստացվում է, որ մեկ ջրաղացի աշխատանքը համարժեք է ՋԷԿ-ում արտադրված մինչև 15 հազար ԿՎտժ էլեկտրական էներգիայի հետ, որի հետևանքով կունենանք մոտ 4 տոննա օրգանական վառելիքի խնայողություն և շրջակա միջավայր չի արտանետվի մոտ 30 կգ ազոտի օքսիդ:

Հեղինակը հիմնավորում է, որ ջրաղացների օգտագործման պարագայում կմեղմանա տվյալ տարածաշրջանում ոչ միայն էներգետիկական և պարենային անվտանգությունը, այլև կլուծվեն բնապահպանական, զբոսաշրջության և տարաբնույթ այլ հարցեր:

Ուսումնասիրությունները վկայում են նաև, որ առաջնահերթ գործարկել նոր տիպի ջրաղացների կառուցումը Արցախում, ՀՀ Շիրակի և Սյունիքի մարզերում:

Հեղինակի նպատակն է ապագայում ստեղծել Հայաստանի էներգետիկայի թանգարան, որտեղ կարելի է ունենալ ջրաղացներին նվիրված բաժին:

Ս.Պապիկյանը բնագավառին քաջածանոթ, մեծ ճանաչման արժանացած գիտնական է, գրող, բանաստեղծ, հրապարակախոս, հասարակական ակտիվ գործիչ:

Գրախոս՝ տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
ԱՇՈՏ ՄԱՐԿՈՍՅԱՆ

Գլուխ 1. ԶՐԱՂԱՑՆԵՐԻ ՀԱՅՏՆԱԳՈՐԾՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

1.1. Զրաղացները հին Հռոմում և Հունաստանում

Արևմտյան երկրներում ինժեներական միտքը ջրաղացների ստեղծման համար առաջինը հայտնագործեցին երկու կարևոր խնդիր. ջրային անիվը և ատամնային փոխանցումը: Զրային անիվի վերաբերյալ մեզ հասած տեղեկատվությունը գալիս է դեռևս մ.թ.ա. 3-րդ դարի հույն գիտնականներից: Նրանք տեղեկացնում են, որ դեռևս մ.թ.ա. 71թ. Փոքր Ասիայում շրջագայության ժամանակ տեսել են ջրային անիվ: Այն օգտագործվում էր ցորենի մշակման համար: Հռոմեացի ինժեներները տվեցին ջրային անիվի առաջին տեխնիկական նկարագրությունը, որը հնարավորություն էր տալիս աշխատեցնել մեխանիզմը ատամնային փոխանցման միջոցով: Հռոմեացիները նշում էին, որ մ.թ.ա. մոտ 20թ. գոյություն ունեին ջրի ուժով աշխատող ցորենի մանրացման մեխանիզմներ: Վկայություններ կան, որ մ.թ.ա. 73թ. ջրաղացներ գոյություն ունեին Հռոմեական Սիրիայում: Հավանական է, որ ոսկի պարունակող կվարցի մանրացման համար օգտագործվող ջրաղացները գոյություն ունեին սկսած 1-ին դարի վերջից մինչև 2-րդ դարի սկիզբը: Նմանատիպ կառուցվածքներ հայտնաբերվել են Եվրոպայում գտնվող Հռոմեական բոլոր հորերում, հատկապես Իսպանիայում և Պորտուգալիայում:

Մ.թ.1-ին դարում Ֆրանսիայի հարավում գտնվող ջրաղացը ներկայացվում էր որպես ամենամեծ սարքավորումը, որի աշխատանքի ժամանակ օգտագործվում էր 16

ջրային անիվ: Նրանք սնում էին համապատասխան քանակությամբ ջրաղացներին: Նրանց արտադրողականությունը կազմում էր օրական 4.5 տոննա: Այն բավարար էր Ալերտ քաղաքի 12500 բնակչությանը հացով ապահովելու համար: Նմանատիպ ջրաղացային համալիր գոյություն է ունեցել նաև Յանիկուլում: Ջրաղացպանների պարտականությունների մեջ էր մտնում ապահովել Հոռոմ քաղաքին այլուրով: Համալիրը համարվում անչափ կարևոր կառույց:

1086թ. Անգլիայում գոյություն ունեին 5624 ջրաղաց: 1300թ. օգտագործվում էին 10 հազարից մինչև 15 հազար ջրաղացներ: 7-րդ դարի ջրաղացներն հայտնի էին նաև Իռլանդիայում: Մակընթացության ժամանակ ջրի ուժը օգտագործում էին ջրաղացներում արդեն 6-րդ դարում¹:

Չինաստանում ջրաղացները հայտնվել են մեր թվարկության 30-ական թվականներին: Այն օգտագործվել է մեխանիզմների շարժման և այլ նպատակների համար: 612 թվականի աղբյուրներում նշվում է ջրաղացի աշխատանքից ստացված արդյունքի բաժանման վերաբերյալ: 7-ից 9-րդ դարերում կանոնակարգվել է ջրաղացների աշխատանքը տարվա ընթացքում: Այն շատ խիստ էր: Մեծահարուստներին պատկանող շատ ջրաղացներ քանդվել են, որոնք չեն բավարարել գոյություն ունեցող օրենքներին: Ըստ այդ օրենքների ջրաղացների աշխատանքը չպետք է խոչընդոտեր գետային տրանսպորտի աշխատանքին և այլն: Մ.թ. 610-670թթ. ջրաղացները տարածում գտան նաև Ճապոնիայում: Մ.թ. 641 թ. ջրաղացները սկսեցին աշխատել նաև Տիբեթում:

¹ Պապիկյան Ս.Ռ., Հայաստանի էներգետիկան մինչև 1920 թվականը: Երևան: «Հայաստան» Հրատարակչություն 2003թ:

Հնդկաստանում ջրաղացներ ներմուծվել են Հոմի կայսրությունից մ.թ. 4-րդ դարում: Մինչև 1960թ. Իրանում գործում էին 300 ջրաղաց: Ներկայումս նրանցից մի քանիսն են աշխատում: Նրանցից հայտնի է Ասկզառան: Տուրիստների մոտ մեծ հետաքրքրություն ունի Իեզդ քաղաքի ջրաղացը: Այն աշխատում է և այնտեղ այլուր են ստանում:

Ջրաղացները լինում են երկու տեսակի

1. Հորիզոնական ջրանիվ ուղղահայաց առանցքով,
2. Ուղղահայաց ջրանիվ հորիզոնական առանցքով:

1.2. Ջրաղացների սկզբնավորումը Հայաստանում

Հայաստանում ջրաղացները տարածված են եղել դեռևս ուրարտական ժամանակներից, որի մասին վկայում է Վարազա լեռան (Վան քաղաքից հարավ-արևելք) վրա գտնված, 92 սանտիմետր տրամագծով ջրաղացքարը: Ջրաղացները կառուցվում էին գետակների և առուների վրա, այնպիսի տեղերում, որ հնարավոր լիներ փայտե, քարե, հետագայում նաև մետաղյա խողովակով թեքությամբ գահավիժող ջրի ուժով պտտեցնել թափանիվը, դրա միջոցով էլ վերին կամ շարժական ջրաղացքարը: Հաճախ մինևույն առվի կամ գետակի վրա կառուցվել են տասնյակ ջրաղացներ, որոնք սպասարկել են շրջակա բնակավայրերին: Ջրաղացներում տեղադրվում էր նաև ձավար ծեծելու սարք (դինգ): 19-րդ դարի 20-ական թվականների վերջին Հայկական մարզում գոյություն ունեին 1456 ջրաղաց, 138 դինգ, իսկ Երևան քաղաքում՝ 47 ջրաղաց, 6 դինգ: Ջրաղացներն ունեին շատ պարզ կառուցվածք: Դրանք բաղկացած էին ջրաղացքարից, որը տեղադրված էր նույն մեծությամբ, բայց ավելի բարակ, մի այլ անշարժ քարի վրա,

ուղղաձիգ ուղղությամբ մի առանցքից, որը վերևում հատուկ հարմարանքով մտնում էր ջրաղացքարի վրա փորված փոսիկի մեջ, իսկ ներքևի ծայրում իր վրա կրում էր թևավոր անիվ: Ջուրը մի քանի մետր բարձրությունից հարվածելով թևավոր անիվին, այն դնում էր շարժման մեջ: Թևավոր անիվի շարժումը ուղղահայաց առանցքի միջոցով հաղորդվում էր ջրաղացքարին և վերջինս էլ սկսվում էր պտտվել: Ջրաղացքարի շարժումը կանոնավորում էին փայտյա հատուկ լծակով, որը կապված էր պտտվող մեխանիզմին. այդ նույն արդյունքին կարելի էր հասնել նաև ջրի ավելացման ու պակասեցման միջոցով: Ջրաղացն իր շենքով մի խոճուկ հյուղակ էր :

Ջրի անկման ուժին համեմատ, ջրաղացքարերը լինում են մեծ կամ փոքր: Մեծ ջրաղացքար ունեցող ջրաղացները 24 ժամում կարող էին աղալ ավելի քան 30 փութ հացահատիկ: Ջրաղացներից 32-ը պատկանում էին քաղաքի բնակիչներին, իսկ մնացածները՝ սարդարին, մյուս խաներին և վանքերին: Մարդարական և խանապատկան ջրաղացները Հայկական մարզի կազմակերպումից հետո համարվեցին պետական: Երևանում խանական շրջանում հայտնի էր Ջանգվի գետի վրա, կամրջից վերև գտնվողինը աչքանի «Դոխկուզ-Դայիրման» ջրաղացը, որը հետագայում էլ մնաց իբրև գործող ջրաղաց:

Դինգերի (սանդ, հավանդ) միջոցով օրիզը վեր էին ածում բրնձի, այն՝ մինչ այդ անցկացնելով նախ թեթև ջրաղացքար ունեցող ջրաղացով: Մրանք ևս առանձին բարդություն չունեին: Ի տարբերություն այրաղացների, դինգերում, մինչև օրիզը վեր էր ածվում սովորական բրնձի՝ կատարվում էր երեք և ավելի պրոցեսներ: Լավորակ օրի-

զի ամեն մի խավվարից (30 փութ) ստացվում էր կես խավվար բրինձ: 1892թ. Երևանում շաքթ է մտել Ավետովի դինգը՝ բրինձ մաքրող ջրաղացը: 1910թ. Երևանում շահագործվել է Կիրիլ Սիլչենկոյի այրաղացը, որն աշխատել է էլեկտրական էներգիայով: Երևան քաղաքում 1829/1832թթ. եղել են 23 ջրաղացայան, 1851թ.՝ 15, 1865թ.՝ 72, 1879թ.՝ 14: Ինչպես երևում է բերված թվերից ջրաղացայան վարպետների թիվը գնալով պակասում են: 1950-ական թվականներին էլեկտրական աղացների երևան գալու հետ ջրաղացներն աստիճանաբար կորցրեցին իրենց նշանակությունը: Չնայած դրան, այսօր էլ Հայաստանում աշխատում է Աշտարակ քաղաքի Քասախի կամրջի մոտ գտնվող ջրաղացը, որը կառուցվել է մոտ 400 տարի առաջ:

Ջրաղացների թիվը Հայաստանում ուշ միջնադարում հասնում էր 1600-ի: Ջրաղացների կարողությունը սահմանվում էր աղացների քանակով, որն էլ իր հերթին կախված էր բնակավայրերի մեծությունից և աղացները շարժող ջրի քանակից:

1.3. Աշտարակի ջրաղացը

Աշտարակի կամուրջի մոտ գտնվող ջրաղացը գոյություն ունի արդեն 400 տարի: Կամուրջը, որի մոտ կառուցվել է ջրաղացը, Աշտարակի պատմական 5 կամուրջներից մեկն է, որը կապում էր Աշտարակի չորս պատմական թաղամասերը՝ Բերդի, Ծիրանավորի, Կարմրավորի և Մարինեի թաղերը:

Աշտարակի ջրաղացը խոշոր ջրաղացներից է, որովհետև ունի վեց աչք: Աչքերի քանակը նրա տիրոջ հարստության չափանիշն էր:

Աշտարակի ջրաղացի հատակագծա-ճարտարապետական հորինվածքը բավական բարդ է: Այն հատակագծում ունի 23,6x8,4x30,0x9,3 մ չափեր: Բաղկացած է մեկ ալրաղաց բաժանմունքից, որն ունի 6 ալրաղաց աչքեր և ջրաղացպանի սենյակից: Շենքն ամբողջությամբ ծածկված է հարթ գերանածածկով: Ծածկը կրել են փայտից սյուները, որոնք բարձրացել են քարից խարիսխների վրա: Խոյակները որոշակի մշակման են ենթարկվել՝ որոշակի գեղարվեստականություն հաղորդելով ներքին տարածության կոլորիտին: Դրանց միագիծ դասավորությունը բնորոշ է այս շրջանի արտադրական շենքերին:

Շենքը կառուցված է տուֆ քարով: Ունի բնակելի և տնտեսական կառույցների բարձրությանը մոտեցող բարձրություն, այսինքն՝ լուծված են բնական մասշտաբի մեջ: Պատի առաջին շարքերը շարված են համեմատաբար խոշոր քարերով, որից հետո շարքերի քարերը ավելի փոքրանում են: Բացվածքները փոքր են, որոնք ապահովում են ինչպես լուսավորությունը, այնպես էլ օդափոխությունը: Շենքն ունի մեկ մուտք: Ջրաղացի շենքի տանիքը հետագայում կառուցվել է երկլանջ: Տանիքի ծածկը իրականացվել է կղմինդրով:

Թեփահանիչ շենքը կառուցված է տեղական տուֆ քարով՝ կանոնավոր կոպտատաշ եղանակով: Քարի շարի չափերը շենքի ողջ բարձրությամբ գրեթե չեն փոփոխվում: Ծածկը իրականացվել է փայտով, որի հիմքը նստում է տուֆե արտաքին պատերի վրա: Մուտքի բացվածքում ծածկի փայտե հեծանի թռիչքը կրճատելու նպատակով դռան բացվածքի ձախ կողմում տեղադրվել է փայտե սյուն, որը ծածկի բեռնվածքը փոխանցում է բացվածքի

ստորին տուֆե պատին: Ջուրը բնական աղբյուրից դեպի շենք հասցվել է փայտե խողովակներով, որը հոսելով շենքի ստորին մասով պտտում է փեռերով մետաղական անիվը, որը նախկինում եղել է փայտից: Անիվը մետաղական ձողով կապված է թեփահանող քարի հետ, որը պտտվում է ջրի հոսքի ազդեցությամբ:

Տեղադրված է գեղատեսիլ վայրում՝ Քասախ գետի ափին, միջնադարյան կամրջի հարևանությամբ, վերնում՝ լազուր կամարում նշմարվում են միջնադարյան տաճարների ուրվագծերը:

1. 4. Տաշտունի ջրաղացը

Ներկայում ՀՀ Սյունիքի մարզի Տաշտուն գյուղում գոյություն ունի աշխատող ջրաղաց: Այն կառուցվել է ավելի քան 100 տարի առաջ: Գտնվում է անմխիթար վիճակում: Անհրաժեշտ է վերակառուցել և դարձնել տարածաշրջանի համար զբոսաշրջության հիանալի վայր:

1. 5. Երևանի ջրաղացները

20-րդ դարի սկզբին Երևանի մեծահարուստ Հաջի Իրզան Չանգվի ափին ունեցել է ջրաղացներ և ցանկություն է ունեցել իր ջրաղացների տեղում կառուցելու հիդրոէլեկտրակայան: Էջմիածնի սինոդի տվյալներով 1901թ. Չանգու գետի վրա իրենց պատկանող ջրաղացը բերել է 1000 ռուբլի շահույթ:

Այն կապալով մեկ տարի ժամկետով տրվել է Երևանի բնակիչ Իվան Պապաջանյանին: Քաղաքացիներն իրավունք ունեին իրենց հողերը տնօրինել ինչպես ցանկա-

նային: Ի. Շոպենը գրում է, որ նրանք իրավունք ունեին իրենց այգիները, բաղ ու բախշան և տները «վաճառել, գրավ դնել, օտարացնել»: Երևանի քաղաքացիներն իրենց պատկանող հողերի նկատմամբ նույնպիսի իրավունքներ ունեին XVI-XVIII դարերում: Կաթողիկոսական դիվանի հայերեն և պարսկերեն բազմաթիվ վավերագրեր վերաբերում են Երևան քաղաքում ու Երևանի խանության գյուղերում կատարված այգիների, բանջարանոցների, մուլքադարական ամբողջական գյուղերի, տների, ջրաղացների, դաշտերի, դինգերի, ձիթհանքերի և անշարժ այլ ունեցվածքների առ ու վաճառքին, փոխանակությանը, նվիրատվությանը, ժառանգելուն: Այդ բոլոր գործարքները ձևակերպվում էին գրավոր համաձայնագիր-կալվածագրով, որի մեջ նշվում էին հողատարածության տեսակը (այգի, բանջարանոց, դաշտ), տարածությունը, հաճախ ոռոգման պայմանները, տեղը, սահմանները, սեփականատիրական կարգը, ինչ եղանակով է ձեռք բերված՝ գնմամբ, ժառանգական կարգով, նվիրատվությամբ, թե ուրիշ ճանապարհներով և այլն: Համաձայնագիր-կալվածագիրը հաստատվում էր համապատասխան օրգանների կողմից՝ մի շարք անձանց վկայությամբ²:

Երևանում Հայոց կաթողիկոսներն ունեին իրենց մշտական իջևանը՝ Չորագյուղի անապատը: Կառուցվել են կաթողիկոսարան, կաթողիկոս. փոքր եկեղեցի՝ Ս. Գևորգ անունով, Ս. Հակոբ Հայրապետ և Ս.Սարգիս եկեղեցիները: Էջմիածնից եկած հոգևորականները կառավարել են Մայր աթոռի երևանյան կալվածքները, ջրաղացներ, այ-

² Պապիկյան Ս.Ռ., Երևանի ջրաղացները: «Երևան-2800» միջազգային գիտաժողովի ժողովածու: Երևան, 2018թ.:

զիններ և այլն: Երևանում Մեծ ու փոքր բոլոր արհեստանոցները հիմնականում գտնվում էին շուկայի (Ղանթարի) շուրջը: Իսկ ջրաղացները հասկանալի պատճառներով գտնվում էին Հրազդանի և Գետառի ափերին:

Սակայն քաղաքային բնակչությունը վանքերից չէր փրկվում միայն դրամական ուղղակի հարկը վճարելով: Քաղաքի հայակազմ բոլոր համքարությունները զանազան նվերներ էին տալիս եկեղեցիներին, կատարում էին գոհաբերություններ, նվիրատվություններ, քաղաքում զանազան եղանակներով էջմիածնին և այլ վանքերին էին անցնում ջրաղացներ, այգիներ, և այլն:

Օսմանյան կայսրությունը գրավյալ տարածքներում /1590թ./, որի մեջ մտնում էր նաև պատմական Հայաստանի արևելյան մասը, նախաձեռնեց հարկացուցակների՝ աշխարհագիր մատյանների (թահրիթ դեֆթերի) հաշվառում: Կազմվել է 1590թ. Երևանի վիլայեթի հարկամատյանը, որի բաղկացուցիչ մասն է կազմել Երևանի նահիեն (գյուղախումբ): Երևանի գյուղերում եղել են նաև ջրաղացներ և ձիթհաններ: Գյուղերում ջրաղացները եղել են 44-ը, որից 11-ը չի աշխատել: Ամենաշատ ջրաղացներ եղել են Քանաքեռում, որտեղ 9 ջրաղացից միայն մեկը չի գործել: Նահիրեում կային նաև ձիթհաններ, որոնք 4-ն էին և գտնվում էին գյուղերում: Նրանցից միայն երկուսն է գործել:

Երևանի նահիրեում ջրաղացների դիմաց գանձվել է 30 կամ 60 աքչե: Ըստ Երևանի վիլայեթի մատյանների յուրաքանչյուր ջրաղացի դիմաց ամսական սահմանվում էր գանձել 5 աքչե: Ըստ երևույթին 30 կամ 60 աքչե գումարը պայմանավորված է եղել տարվա ընթացքում ջրաղացի լրիվ կամ թերբեռնված աշխատելու հնարավորությամբ:

Երևան քաղաքում ջրաղացները աշխատել են ամբողջ տարին: Երևանում գոյություն ունեւ 19 ջրաղաց, որից մեկը չի գործել³:

Չիթհանների հարկադրույքը կազմել է 60 աքչե:

Անհրաժեշտ է նշել, որ աքչեն արծաթե դրամի միավոր է: Օսմաներեն նշանակում է սպիտակավուն: Օսմանյան աքչեները հավասար էին մեկ քառորդ դիրհեմ արծաթի: Դիրհեմը հավասար էր 3.06 գրամի:

1.6. Ներքին Գետաշենի ջրաղացը

Ներկայումս ևս մեկ ջրաղաց է աշխատում Հայաստանի Գեղարքունիքի մարզի Մարտունու տարածաշրջանում՝ Ներքին Գետաշեն գյուղում:

Ներքին Գետաշեն գյուղը Գեղարքունիքի մարզի Մարտունու տարածաշրջանի ամենամեծ գյուղերից է, գտնվում է Արգիճի գետի ափին՝ Սևանա լճից ոչ հեռու: Հին նվանումը՝ Կոթ: Գյուղը հիմնադրվել 1828-1829 թվականներին Արևմտյան Հայաստանի Ալաշկերտի Թուփրախկալա գյուղից, ինչպես նաև Մուշից գաղթած հայերի կողմից: Բնակչությունը հիմնականում զբաղվում է անասնապահությամբ և հողագործությամբ: Արգիճի գետը սկիզբ է առնում Գեղամա լեռնաձախանի Գնդասար լեռնազանգվածի հյուսիսային լանջից՝ 2600 մ բարձրությունից: Երկարությունը 51 կմ է: Այն Սևանա լիճը թափվող 28 գետերից ամենամեծն է:

³ Միրզաբեկյան Գ., Երևանի նահիեն 1590թ. օսմանյան հարկացուցակում: Գիտական հոդվածների ժողովածու. – Երևան.: Երևան քաղաքի պատմության թանգարան: 2018թ.: 59-66 էջ:

109223

Արգիճի գետի ափին, Ներքին Գետաշեն գյուղում Թաթոյանի գերդաստանի ներկայացուցիչները դեռևս 1829 թվականին կառուցել են ջրաղաց, երբ Ալաշկերտից գաղթելուց հետո հաստատվել են Գետաշենի տարածաշրջանում: Ջրաղացը գործել է անխափան: Այն աշխատել է նաև Արցախյան ազատամարտի տարիներին: Ներկայումս Թաթոյանների գերդաստանի ներկայացուցիչները վերակառուցել են ջրաղացը: Այն դարձրել են հիանալի և գողտրիկ մի անկյուն, որտեղ մարդիկ կարող են հանգստանալ, վայելել հրաշագեղ բնության տեսարանները: Կառուցվել է հյուրատուն, այն ունի յոթ հարմարավետ սենյակներ:


Հարկ է նշել, որ տարիներ շարունակ ջրաղացը եղել է տեղաբնակների համար հավաքատեղի, իսկ հյուրերի համար՝ իջևանատեղի: Հուսանք, որ Ներքին Գետաշեն գյուղում վերակառուցված ջրաղացն իր ուրույն տեղը կունենա մեր տնտեսության, ինչպես նաև զբոսաշրջիկության զարգացման գործում:

1.7. Արցախի ջրաղացները

Նախկինում Արցախի գրեթե բոլոր գյուղերում ջրաղացներ կային: XX դարի սկզբներին արդեն շատ գյուղերում արաղացները մեքենայացվել էին: Մասնավորապես Գյունե Ճարտար և Գյունե Կալեր գյուղերում կային մեքենայաղացներ, որոնց արտադրողականությունը բարձր էր⁴:

Ներկայումս Հունտոի կիրճում և նրա շրջակայքում մոտ 12 ջրաղացների ավերակներ են պահպանվել: 19-րդ

⁴ Պապիկյան Ս.Ռ., Արցախի էներգետիկան:// ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն: Երևան, 2021, 150 էջ:



դարի վերջին և 20-րդ դարի սկզբին այս ջրաղացները Շուշի քաղաքին այլուր են մատակարարել: Շուշի բերդաքաղաքին այլուր մատակարարող ջրաղացների մեծամասնությունը գտնվում էին Կարկառ գետի վրա՝ Հունոտի տարածքում: Հունոտի Ջրաղացներ, Արցախ Ասկերանի շրջանի Ջրաղացներ գյուղն իր անունը ստացել է, հավանաբար, շատ ջրաղացներ ունենալու պատճառով: Մինչև այժմ պահպանվել են Աղաբեկանց եռաստիճան ջրաղացի, Խուջունց և Ջալալանց ջրաղացների ավերակները:

Մտեփանակերտ, 4 նոյեմբերի, Արցախայրես:

Թուրքագիտական պորտալը հայտնում է, որ հայերի կառուցած 40 ջրաղացը մի քանի մետր հեռավորությամբ կանգնած են կողք կողքի: Մինչև 2010 թվականը գործող 15 ջրաղացի աշխատանքը վերջին 3 տարվա ընթացքում դադարեցվել է: Որոշ ջրաղացներ վերածվել են տների, իսկ մնացածներն էլ ավերված ու լքված վիճակում են:

Ջրաղացները ժամանակին կառուցել ու տնօրինել են հայերը: Անվանումներն են անգամ հայկական: Այս վայրերից հայերի հեռանալու հետևանքով գյուղացիները տիրել են դրանց: Վերջին երկու տարում փակվել են վերջին ջրաղացներն ու վերածվել ավերակների:

Ջրաղացները փակելու պատճառներից մեկն էլ 90-ականների գաղթն է, որի հետևանքով գյուղերը դատարկվել են, այս կառույցներն էլ ավերվել: Իսկ մյուս պատճառն այն է, որ դադարեցվել է ջրաղացների աշխատանքն ապահովող ջրի մատակարարումը:

Գյուղացիներից մեկը, դատական հայց է ներկայացրել ընդդեմ թուրքական ջրմուղի, քանի որ պետական

ընկերությունը դադարեցրել է ջրի մատակարարում, ինչը պատճառով ջրադացները շարքից դուրս են եկել: Սակայն դատական գործն արդյունք չի տվել:

Ներկայումս Վան նահանգի Գյուրփընար (Երվանդունիք) գավառը նշանավոր է ինչպես Վանա բերդով, Հայկաբերդով, այնպես էլ 40 ջրադացով, սակայն մոտավորապես 3 տարի է, ինչ պատմական ջրադացները ոչնչացման եզրին են:

Շուշիի շրջանի գյուղական բնակավայրերից խոշորը Քարին Տակն է: Այն Արցախի հնագույն բնակավայրերից է, հարուստ պատմական անցյալով: Գտնվում է Շուշի քաղաքից երեք կիլոմետր հեռավորության վրա՝ Շուշի գետի ձախ ափին, այդ գետի անդնդախոր կիրճի զառիթափ քարածայրի ստորոտում: Տեղանքը բարդ է, բայց յուրահատուկ գեղեցիկ, ջուրն ու օդը՝ մաքուր: Շրջակայքում կան պատմական հուշարձաններ, կամուրջներ, ջրադացներ, քարանձավային շինություններ:

Մինչև 1920 թվականը Արցախի միակ էլեկտրակայանը գտնվում էր Շուշի քաղաքում: Այն ուներ 30 ԿՎտ հզորություն: Դեռևս ճշգրտված չէ նրա շահագործման թվականը:

Ներկայումս հիդրոէլեկտրակայաններից ամենախոշորը Սարսանգի ՀԷԿ-ն է, որը կառուցվել է Մարտակերտի շրջանում՝ Թարթառ գետի վրա: Շահագործման է հանձնվել 1976 թվականի դեկտեմբերի 24-ին: Երկրորդը իր հզորությամբ Թարթառ գետի վրա կառուցված Ջերմաջուր հիդրոէլեկտրակայանն էր, որը շահագործման է հանձնվել 2017 թվականին և ուներ 12 ՄՎտ հզորություն: Այն տարեկան կարող էր արտադրել մինչև 100 միլիոն ԿՎտժ էլեկտրական էներգիա: Ներկայումս ապամոնտաժված է: Արցա-

խում 1940 թ. արտադրվել է 1,57 մլն ԿՎտժ էլեկտրաէներգիա, իսկ 1986 թ.՝ 57,8 մլն ԿՎտժ: Շնորհիվ Սարսանգի էլեկտրակայանի, արտադրվող էլեկտրաէներգիայի ծավալը ավելացել է, 1997-2003 թթ. այն կազմել է 82,2-130,6 մլն ԿՎտժ:

Գլուխ 2. ԶՐԱՂԱՑՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԸ

Հայաստանը ունեցել է 12 մայրաքաղաք՝ Վան, Արմավիր, Երվանդաշատ, Արտաշատ, Տիգրանակերտ, Վաղարշապատ, Դվին, Բագարան, Շիրակավան, Կարս, Անի, Երևան:

Շիրակավանը Աշոտ երկաթի և Սմբատ առաջինի օրոք շուրջ 40 տարի եղել է Հայաստանի մայրաքաղաքը: Նրա ջրաղացների մասին քիչ տեղեկություններ կան: Հայտնի է, որ 20-րդ դարի սկզբին Արշակ Ասլամազյանը Գերմանիայից սարքավորումներ է բերում և կառուցում է ջրաղաց:

1898թ. Կարսում գործել են 5 ջրաղաց, յուրաքանչյուրում աշխատել են չորս մարդ:

1830թ. հին Բայազետից 20կմ հեռու գտնվող Արծափ գյուղից 130 ընտանիք (845 բնակիչներով) եկան Չիբուխլու (Ծովագյուղը մինչև 1935թ. կոչվել է Չիբուխլու): Վերաբնակիչները վերակառուցեցին 4 ջրաղաց և երկու ձիթհան:

Ջրաղացներ աշխատել են նաև Աղստն գետի վրա: Աղստն հովտի բնակիչները իրենց տնտեսական կարիքները թեթևացնելու նպատակով օգտագործել են գետի ուժը. կառուցելով ջրաղացներ և սղոցարաններ: Տեղի բնակիչները երկար տարիներ իրենց աղունը աղում էին ձեռքի քարե երկանքով:

Դիլիջանում ասիական տիպի՝ մեկ-երկու քարերով ջրաղացներ եղել են երեք հատ: Դրանցից մեկը գտնվել է Կալինին փողոցի վերին հատվածում՝ գետի ձախ ափին և պատկանել է ոմն պողոսքիլիսեցու: Երկրորդը պատկանել

է Դավթյաններին, գտնվել է գետի աջ ափին, կահույքի ֆաբրիկայի տարածքում: Այն հետագայում Մելսակ Դավթյանը վերափոխել է ջրի ուժով աշխատող կալի: Հաջորդը պատկանել է Սաղաթեյաններին, որը իր գոյությունը պահպանել է մինչև հիսունական թվականները:

Գոյություն է ունեցել նաև շվեյցարական տիպի ջրադացը: Այն ժողովուրդն անվանել է «Հակոբ - քոխվանց» ջրադաց:

1862թ. Մ.Սմբատյանը շրջագայելով Աղստևի հովտի պատմամշակութային շինությունները (Նոր Գետիկ, Հաղարծին, Ճարխաչ) գալիս է նաև Դիլիջան: Բեքման անունով մի գերմանացի ճարտարապետ Ղարաքիլիսա ձգվող մայրուղուն կից կառուցել և շահագործել է գործարան: Այն աշխատել է ջրի ուժով: Սմբատյանը գրում է. «Գործարանը, որ Դիլիջանայ գետի վրայ է շինված, բավականին թեթևացրել է պարագայքն ու գործավարի աշխատություններն: Այս գործարանի շինվածքը պարունակում է իր մեջ նախ՝ ջրադաց ցորենոյ, որ ընծայում է մարդկանց երեք տեսակի այուր, այն է՝ շատ լավն, միջակ և հասարակ, ցորենու մանրուք, կրուպա՝ երկու տեսակ, ձեթ շատ մաքուր, բրնձի 2 տեսակ և Եվրոպայի թեթև գործիքով ցորենոյ խուրձը ծեծած, քամած, մաքրած դուրս է հանում մաքուր ցորեն, հարդը ուրիշ տեղ հեռացնելով և տախտակ քաշելու գործիք:

Այսքան զանազան գործիքները շրջում են մի ջրբաժան ջրով և մի վարպետի կարգադրությամբ, որի անունն է Դմիտրի Մակարիչ: Սրանից մի 25 քայլ հեռու կար մի այլ գործարան, որը նույնպես մի փոքրիկ ջրոյ գորությամբ հինգ բերանով մեծ սղոցներ՝ ինքն իրեն քաշելով կտրում

հանում էին հինգ հատ տախտակ պատրաստած, չափավոր լայնությամբ և երկարությամբ»:

Դիլիջանում արդեն գործող հին ասիական ջրաղացների փոխարեն տեղի ռուսները կառուցում և գործարկում են շվեյցարական տիպի թափանիվով ու տրանսմիսին մեխանիզմով ջրաղացներ, որոնք աղուը վաղօրոք գտում, չորացնում և ապա աղում էին ավելի մեծ արտադրողականությամբ: Այդպիսիներից էին Սեմյոնովների, Վատոլինների, Գոլովինոյի, քաղաքային հիվանդանոցի շենքից ներքև, գետի ափին կառուցված Հակոբ-քյոխվանց ջրաղացը:

1890-ական թվականներին Մակար Բարխուդարյանը Արցախի նահանգի տարածքները ուսումնասիրելիս այցելում է նաև Հաղարծին:Այդ մասին իր «Արցախ» գրքում գրում է. «Վանքերս յուրյանց արևմտյան կողմում ունին կալ, քարուկիր մարագ, կալապան և ահագին ցորենահոր, ունին նաև վարելահող, անտառ, խոտհարք, թոնրատուն, ջրաղաց, գոմ և անասուն:Այս ամենի կենդանության համար պարտական ենք Պողոս հայր սուրբին»:

Ջրաղացների մասին տեղեկություններ կան նաև Մխիթար Գոշի դատաստանագրքում⁵:

Գլուխ ԴԳ - ջրաղացների մասին:

Եվ եթե աղբատության պատճառով է ջրաղացը վաճառվել, ապա մեկ տարի ետ գնելու փրկության իրավունքի մեջ լինի նրա և նրա ազգականների համար: Իսկ այլազգիների (ոչ քրիստոնյանների) համար, նույն տարում վաճառքն հաստատվի:

Գլուխ Ը - ջրաղացներ վարձելու մասին: Այսպիսի բաներ վարձով վերցնելիս՝ վկաների միջոցով հաստա-

⁵ Մխիթար Գոշ, Գիրք դատաստանի, Երևան, 1975թ:

տուն անել: Շահ ստանալը վարձով տվողի համար առանց գեղչի լինի և շահի դիմաց չվճարի տուգանք: ԵՎ իր վրա լինի պակաս բաները պատրաստելը, եթե ոչ, ապա այդ պակասների պատճառով եղած վնասները նույնպես վարձի գինը որոշելիս՝ տվողի վրա լինի, իսկ անպատրաստությունից եղած վնասները՝ վերցնողին լինի՝ քարի, նավի, երկաթի և այլ բաներում, նաև գողացվածները:

Իսկ այրվածը, եթե տիրոջ պատճառով լինի՝ վնասը նրանը լինի, իսկ եթե վարձով վերցնողի պատճառով է նրանը:

Ըստ այդմ՝ դատաստան անել նաև նման այսպիսի հարցերում:

Գլուխ ՄԽԴ - ջրաղացների մասին:

Ջրաղացպանները իրենց արհեստի մեջ փորձառու լինեն, երկյուղ ունենան, որ հանկարծ չլինի թե կերակուրը ապականեն: Այդպիսի վնասարարների դատաստանն այս է. «Լույսն աշխարհ եկավ, սակայն մարդիկ խավարը սիրեցին...» (Հովհաննես, Գ19): Եվ նմանների ոչ միայն վարձը չպիտի լինի, այլ նաև պիտի տուժեն տված վնասի համար: Իսկ եթե պատճառը աղունի խոնավությունից լինի, ջրաղացպանները անպարտ մնան, սակայն ջուր քաշած այլուրի դիմաց վճարեն: Գողացվածի համար մեկին չորս վճարեն...:

Հայաստանում ջրաղացներ կառուցել են գրեթե բոլոր գյուղերում, որոնց մոտով հոսել են գետակներ: Հացահատիկը ջրաղաց բերելու գործը հեշտացնելու նպատակով, ջրաղացի տերը կառուցել է ճանապարհներ, լաստանավ, կամուրջ և այլն: Շատ հաճախ ջրաղացները կառուցել են կասկադային եղանակով: Մեկ ջրաղացում աշխատած

ջուրը տրվում էր մյուս ջրաղացին: Փոքր գետերի վրա գտնվող ջրաղացները ամռան ամիսներին չէին աշխատում ջուր չլինելու, իսկ ցուրտ կլիմայական պայմաններում ջրի սառչելու պատճառով: Ջրաղացի աշխատելու համար կառուցել են նաև արհեստական ջրամբարներ: 1808թ. Երևանում Հրազդան գետի վրա եղել է ինը ջրաղաց: 1956թ. Կոշ գյուղում եղել է 5 ջրաղաց, Արթիկում՝ 7, Թալինում և Օշականում՝ 8- ական:

Ջրաղացի կառուցումը և շահագործումը թանկ արժեր: Այդ իսկ պատճառով այն ունեին հարուստ մարդիկ: Քանի որ ջրաղացները եկամտաբեր էին, միջնադարում նրանք անցնում են խոշոր ֆեոդալական կամ վանքապատկան տնտեսություններին: 1736թ. Էջմիածնի վանքին է պատկանել 10-ը ջրաղաց: Որոշ դեպքերում, վանքերին տրվել է ջրաղացի օգուտի մի մասը:

Ջրաղացների առաջացումը դեռևս մնում է անհայտ: Սակայն երկանքների օգտագործումը կարելի է վերագրել մեր թվարկության առաջին դարին:

Երկանքները առաջացել են մեր թվարկության առաջին դարում: Նրանք մեծ տարածում են ունեցել հատկապես միջին դարերում: Նրանց կառուցվածքը շատ պարզ է: Կազմված են ստորին անշարժ աղացաքարից, որի կենտրոնում գտնվող անցքի մեջ դրված է երկաթյա լիսեռ և վերին շարժվող աղացաքարից: Նրա վրա ամրացվում էր նաև բռնակը, որի միջոցով շարժման մեջ էր դրվում աղացաքարը: Երկանքները հիմնականում պատրաստվել են բազալտից, որոշ դեպքերում նաև կարծր կրաքարից: Երկանքները օգտագործվում են հացահատիկ աղալու համար: Աղալուց առաջ ցորենը կամ հաճարը մաքրվում

էր, հետո չորացվում: Երկանքների արտադրողականությունը լինում է տարբեր: Ադունի քիչ լինելու դեպքում այն աշխատացնում է մեկ մարդ: Մի ձեռքով լցնում է ադունը, իսկ մյուս ձեռքով պտտեցնում է բռնակը, որի հետևանքով վերին աղացաքարը սկսվում է շարժվել:

Երկանքները Հայաստանում շատ տարածված են եղել և մինչև 20-րդ դարի վերջերը շատ բնակավայրերում կարելի էր հանդիպել նրանց գոյության մասին:

Ջրաղացը կարևոր դեր է կատարել տնտեսության զարգացման գործում: Նախկինում դարեր շարունակ ցորենը, գարին, կորեկը և հաճարը հիմնականում աղացվել է ջրաղացներում, որոնք աշխատում են ջրի ուժով: Այն Հոռմում օգտագործվել է մ.թ.ա. առաջին դարում: Կարելի է ենթադրել, որ ջրաղացների առաջացումը սկսվել է այդ ժամանակներից: Այդ ժամանակաշրջանի բանաստեղծները գովեստով են խոսում ջրաղացների մասին: Նրանք հիմնականում կառուցվել են թագավորական պալատների մոտ և մեծ նշանակություն ունեին: Այդ ժամանակահատվածում Հայաստանը համարվում էր աշխարհի հզոր պետություններից մեկը: Հայաստանի ջրաղացների վերաբերյալ ուսումնասիրություններ են կատարել շատերը՝ Հ.Բեգլարյան և ուրիշներ: Ելնելով մեր ձեռքի տակ գտնվող հավաստի տվյալներից կարող ենք վստահաբար ասել, որ Հայաստանում ջրաղացները լայն կիրառություն են գտել սկսած X-րդ դարից: Նախքան ջրաղացները լայն կիրառություն են գտել երկանքները: Այդ ժամանակվա ջրաղացները եղել են երկու տեսակի՝ ուղղանկյուն թափանիվով և հորիզոնական թափանիվով:

Ջրաղացների տերերը հիմնականում ֆեոդալները, մեծատունները և վանքերն էին: Նրանք եկամուտ ստանալու լավ կառույցներ էին: Բացի դրանից, ջրաղացպանները պարտավոր էին աղունավարձ վճարել: Այն կախված էր ջրաղացի գտնվելու վայրից, ջրի քանակից: Այդ մասին գրում են նաև Մխիթար Գոշը, Սմբատ սպարապետը: Աղունավարձը կարող էր տրվել նաև բնամթերքով:

2.1. Ջրաղացները միջնադարյան Հայաստանում

